
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԼԵՌՆԵՐԻ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՆՎԱՆԱԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի լեռներից երկուսը՝ Աբոսը (Ἄβος) և Նիբարոսը (Νίβαρος), Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ հիշատակվում են կողք կողքի¹: Ն. Ադոնցը դրանք նեղ առումով համարում է Մասիսի գույգ գագաթները, իսկ լայն առումով՝ Հայկական Պար լեռնաշղթան²: Ըստ երևույթին, Աբոսը Մեծ Մասիսն է, իսկ Նիբարոսը՝ Փոքրը, որովհետև Ստրաբոնը Նիբարոսը տեղորոշում է Մարաստանին ավելի մոտ, իսկ «Աբոսը մոտիկ այն ճանապարհին, ուր տանում է Եկրատան»³: Անշուշտ, Ստրաբոնը ի նկատի է առել այն ճանապարհը, որի շարունակությունը հասնում էր Մարաստանի մայրաքաղաք (և պարթև արքաների ամառային նստավայր) Եկրատան, կապելով միմյանց հետ Հայաստանի երեք մայրաքաղաքները՝ Երվանդաշատը, Արմավիրը և Արտաշատը: Արարատյան դաշտի ձախափնյակով ընթացող այդ ճանապարհին ավելի մոտ գտնված լեռը Մեծ Մասիսն է:

Աբոս լեռնանվան առթիվ նախ բերենք մեր հեռավոր նախնիների առասպելաբանական պատկերացումներն արտացոլող և մեր պատմահոր գրչին պատկանող Մեծ Մասիսի հետևյալ բնութագրումները. «հարավային արեգնաձև լեռան, սպիտակափառ ունելով գագաթն», «ծեր ոմն արդարև լեռան ի մէջ երիտասարդացեալ լերանցն»⁴: Որ մեր նախնիները հայոց ձյունակատար լեռները քարացած ծեր նահապետներ են ընկալել, վկայում է հետևյալ ավանդազրույցը. «Ասում են, թե հայոց լեռները շատ առաջ հաղթանդամ ու հսկա եղբայրներ են եղել... Ժամանակ անց, երբ եղբայրները ծերանում են, էլ չեն կարողանում վաղ վեր կենալ: Մի օր էլ, ուշ արթնանալով, նրանք մոռանում են կապել գոտիները և հակառակ իրենց սովորության, այնպես բարևում են իրար: Աստված տեսնելով այդ՝ պատժում է եղբայրներին. նրանք քարանալով լեռներ են դառնում, գոտիները՝ կանաչ դաշտեր, իսկ արցունքներն էլ ան-

¹ Strabo, XI, 14, 2; XI, 14, 14 [տես նաև Ստրաբոն. Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան (այտուհետև՝ Ստրաբոն), Երևան, 1940, էջ 55, 63].

² Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 56–57; Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 320, ծան. 3:

³ Strabo, XI, 14, 2; XI, 14, 14 (տես նաև Ստրաբոն, էջ 55, 63–65):

⁴ Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց (այտուհետև՝ Խորենացի), Երևան, 1981, Ա, ժբ: Խորենացիական «ծեր» բնութագրումով լեռը՝ Աբոս/Մեծ Մասիսը իր անունը չէր կարող ստացած լինել հնդիրանական ջրային Ապամ-Նապատ (բառացիորեն՝ «ջրերի գավակ») աստվածության անունից, մանավանդ որ Ապամ-ից հունաստան Ἄβος ոչ մի կերպ չէր առաջանա:

մահական աղբյուրներ»⁵: Առասպելաբանական այդպիսի մի կերպար է նախապես ըմբռնվել նաև Մասիս լեռան անվանադիր Ամասիան: Մովսես Խորենացու բերած հին հայկական մի ավանդազրույցի համաձայն, Արամայիսի որդին էր նա: Եվ «Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ, եւ յետ Գեղամայ զՓառոյս Արի և զՅուլակ: Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ... զլեառնն Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս»⁶:

Կարծում ենք, որ Մասիս լեռնանունը ծագումնաբանական կապի մեջ լինելով Ամասիա անվան հետ, սրանից չի ծագում, այլ սրա հիմքն է: Մասիս < *մաս-ի-ս, որտեղ, հիմք *մաս-ը «լեռ» է նշանակում և առկա է նաև այնպիսի լեռնանունների հիմքում, ինչպիսիք են Մասիք («Միփան»), Μάσιος//Masius// Մասիոն լերինք⁷ և «Գիլգամեշ» դյուցազնավեպից հայտնի Mašu լեռնանունները⁸: Բնչպես հնագույն հայերենի *մաս-ի (<h.-ե. *mḥ-s-), այնպես էլ հնդեվրոպական մյուս լեզուների ժառանգած *mḥ-t- նախաձևի հիմքում *men- «բարձրանալ, բարձունքվել» արմատն է՝ իր հնչյունական տարբերակներով. հմմտ. ավեստ. matī «լեռնագագաթ», լատին. mōns (mōntis) «լեռ», բրետ. menez «լեռ» և այլն⁹: Հ.-ե. *mḥs- > հայ. մաս հմմտ h.-ե. *mēns- > ամիս, *mēms- > միս, *oms- > ուս հնչյունական անցումները՝ s-ին նախորդած ռնգային բաղաձայնի անկումով¹⁰: Հնագույն հայերեն *մաս > *Մասի (-ի վերջածանցով), իսկ Մասի > Մասիս/Մասիք (-ս և ք հոգնակիակերտով): Մասի նախաձևի գոյությունը գալիս են հաստատելու ինչպես հուն. Μάσι-ος և լատին. Masi-us ձևերը, այնպես էլ Գրիգոր Մագիստրոսի հիշատակած Մասիքոն («Մեծ Մասիս») ձևը¹¹, որտեղ քոն բաղադրիչը պարս. քոն/քուհ «լեռ» բառն է:

Մասիսին տված Խորենացու վերոհիշյալ բնութագրումները՝ սպիտակափառ գագաթով լեռ, ծեր լեռ, թույլ է տալիս նրա՝ Ἄβος անվան մեջ տեսնել h.-ե. *au- արմատը, որից սերած բառերը ժառանգ լեզուներում ունեն «պապ» (նաև «մորեղբայր») նշանակությունները: «Պապ» նշանակությամբ հմմտ. հայ. հաւ (սեռ. հողով. հաւոյ, հաւու), իւեթ. huhaš, լատին. avus, հին հյուսիս. afi բառերը¹²:

⁵ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 10:

⁶ Խ ո ռ է ն ա ց ի, Ա, ժբ:

⁷ Strabo, XI, 12, 4; XI, 14, 2; XVI, 1, 23; Ա. Ե Ր Ե Մ Յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 65, 72, 89, 107, 110:

⁸ Ա. Պ Ե Մ Ր Ն Ս Յ ա ն. Հնդեվրոպական-հայկական բաղադրատարրը «Գիլգամեշ» դյուցազնավեպում. – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հոտագոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ (այսուհետև՝ ՇՀԳ գիտ. աշխ.), X, Գյումրի, 2007, էջ 33:

⁹ Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы, т. II. Тбилиси, 1984, с. 666.

¹⁰ Հ. Ա Ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ) հ. I, Երևան, 1971, էջ 157-158, հ. III, Երևան, 1977, էջ 323-324, 609:

¹¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 91:

¹² ՀԱԲ, հ. III, էջ 66-67: Հ.-ե. *au- «պապ» արմատն է արտացոլում նաև Ստրաբոնին՝ Ἄβος լեռնանունով հայտնի մեկ ուրիշ լեռ (լեռնաշղթա), որը, կարծես թե, նա շփոթում է՝ Ἄβος// Մասիսի հետ: Այսուհանդերձ, ըստ Ստրաբոնի, այս մյուս Աբոսից «հոտում են թե՛ Եփրատը և թե՛ Արաքսը, առաջինը դեպի արևմուտք, երկրորդը դեպի արևելք» (Strabo, XI, 14, 2,

Հին հունարենի փոխառած ուրիշ հատուկ անունների նման հայկական այս լեռնանվան մեջ *ևս* *ս* (հայ. *ւ*, *վ*) հնչյունը արտացոլված է *β* տառի միջոցով: Մեծ Մասիսի ընկալումը՝ որպես լեռնացած ձեր նախնի (պապ), ենթադրում է Փոքր Մասիսի ընկալումը՝ որպես թոռ («ձեր ուն արդարեւ լեռոն ի մէջ երիտասարդացեալ լերանցն»): Այսինքն՝ Մասիսների հնագույն անուններում իր դրսևորումն էր գտնելու «հին-ձեր-պապ» և «նոր-երիտասարդ-թոռ» իմաստաբանական զույգ շարքերի հակադրամիասնությունը: Հին բառը նաև «նախնի, նախնիք» է նշանակում¹³: Մեր պատմահայրը գրում է «հինսն Հայաստանեայց», «հինքն Արամագնեայց»¹⁴, իսկ Մտ. Մալխասյանցը թարգմանում՝ «հին հայերը», «Արամյան ազգի ձերունիները»¹⁵: Նոր բառը նշանակում է նաև «մատաղ, դեռածին, կրտսեր»¹⁶: Տարիքային հակադրամիասնության ուշագրավ դրսևորում է պապի և թոռան նույնական անձնանունները կրելու ավանդույթը, որը համեմատելի է Մեծ Մասիս և Փոքր Մասիս լեռնանունների՝ իրականությունն արտացոլող, անվանական հակադրամիասնության հետ: Աբոս (Մեծ Մասիս) և Նիբարոս (Փոքր Մասիս) լեռների «հին-ձեր-պապ» և «նոր-երիտասարդ-թոռ» իմաստաբանական շարքերի հակադրամիասնական ընկալման հենքի վրա փորձենք ստուգաբանել նաև Նիբարոսի՝ լեռնային զույգի երկրորդ անդամի անունը:

Νίβαρος լեռնանունը, մեր կարծիքով, արտացոլում է *հ.-ե.* *neϋ̅ros նախաձևը (այս դեպքում *ևս* *հուն.* *β-ն* արտացոլում է տեղական *ս-ն*//*հայ.* *ւ*, *վ*), որից է բխեցվում *հին հուն.* νεαρός//νεῦρος «նոր» բառը¹⁷: Նույն նախաձևի տարբերակներից են ծագում հայ. նոր (<*novros) և լատին. neverca «խորթ մայր» (<*«նոր մայր») բառերը, որոնք *հին հունարեն* հիշյալ բառի նման, և ի տարբերություն ազգակից մյուս լեզուների արմատակից բառերի, *neϋ- «նոր» արմատին հավելել են *-ο* մասնիկը¹⁸: Նույն մասնիկն առկա է նաև Νίβαρος - լեռնանվան մեջ: Հ. Աճառյանը նշում է, որ «այս մասնիկը ցույց է տալիս երկու իրերի միջև հակադրություն. ուստի հայ. նոր նշանակում է բուն «երկուսի մեջ ավելի նորը»¹⁹: Բնականաբար, Մեծ ու Փոքր Մասիսների դեպքում եթե ի նկատի առնենք «երկու իրերի միջև հակադրությունը», ապա «երկուսի մեջ ավելի նորը» կլինի Փոքր Մասիսը, որին և, իրավամբ, տրվել է Νίβαρος < *հ.-ե.*

Մ տ ր ա բ ո ն ն, էջ 55): Այս հատվածում հիշատակված Եփրատը Արևմտյան Եփրատն է: Արաքսի սկիզբը համարվել է նաև նրա Մուրց վտակը, իսկ «Մուրց գետի ակունքների ջրբաժան Ծիրանյաց լեռների (այժմ՝ Փալանթոքյան-դաղ) արևմտյան փեշերին գտնվում էին Եփրատի ակունքները» (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 838, ծան. 71): Ըստ երևույթին, այս մյուս Աբոսը «Աշխարհացոյց»-ից հայտնի Կատար երկրի երեք մեծ լեռներից մեկն է (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 106 և ծան. 3):

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. II, Երևան, 1981, էջ 98:

¹⁴ Խ ո թ ե ն ա ց ի, Ա, գ, Ա, գ:

¹⁵ Մ ո Վ ս ե ս Խ ո թ ե ն ա ց ի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Մտ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 13, 33:

¹⁶ ՆՀԲ, հ. II, էջ 441:

¹⁷ М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка, т. III. М., 1971, с. 78.

¹⁸ Նույն տեղում, ՆԱԲ, հ. III, էջ 466:

¹⁹ ՆԱԲ, հ. III, էջ 466:

*νευρος մակդիր-անունը: *Ի դեպ, վերջինս պետք է ունենար նաև «պատանի, երիտասարդ» նշանակությունները, որոնք ունի դրանից ուղղակի ծագած հին հուն. νε(F)αρός բառը²⁰:*

Մասիսների այդպիսի ընկալման մասին է խոսում նաև հայոց հին ավանդազրույցը Ամասիա նահապետի վերաբերյալ: Վերևում տեսանք, որ, պատմահոր բերած ավանդազրույցի համաձայն, Ամասիայի անունով էր կոչվել Մասիս (Մեծ Մասիս) լեռը, որ նա ունեցել է երեք որդի՝ Գեղամ, Փառոհի և Յոլակ: Խորենացու հաջորդ շարադրանքում կարդում ենք. «Իսկ Գեղամայ յետ ամաց անցանելոյ... Շինե՛ գեզր ծովակին, եւ թողու անդ բնակիչս. եւ յիւր անուն եւ սա զլեառնն անուանե՛ Գեղ, եւ զշէնս՝ Գեղարքունի, որով կոչի եւ ծովն: Աստ ծնաւ զորդի իւր զՄիսակ, զայր սեզ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ գեղեցկադեղն»²¹: Ինչպես տեսնում ենք, Միս (Փոքր Մասիս) լեռանը իր անվամբ առնչվող Միսակը (Միսակ<Միս-ակ) հին հայկական ավանդազրույցում համարվել է Մասիսի (Մեծ Մասիսի) անվանադիր և առասպելաբանական անձնավորում Ամասիայի թոռը՝ Ամասիայի Գեղամ որդու որդին:

Ամասիայի առասպելաբանական առարկայացում Մեծ Մասիսը և Միսակի առասպելաբանական առարկայացում Միսը փոխադարձ կապի մեջ են ընկալվել խաղողի հետ հանդես բերած առնչությամբ ևս: Մի երևույթ, որն իր անվանական արտացոլումն է գտել նախ և առաջ ի դեմս Միս լեռնանվան: Միս և Միսակ անունները «խաղողային» ստուգաբանություն ունեն: Սրանց արմատակից սիսակ բառը նշանակում է «գինու խաղողի մի տեսակ, վարդագույն բարակ կեղևով, կլոր և խոշոր հատիկներով»²²: Սրանց հիմք *սիս արմատը ունեցել է նախնական «խաղողի հատ» նշանակությունը: Նույն այս արմատն է առկա սիսեոն բառում, որը հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող բառերից է²³: Հ.-ե. *kīk-er/*keik-er- «սիսեո, ոլոռ» նախաձևից նրա հետ միասին սերում են նաև հուն. κριός (<*κικριός կամ *κικρός), մակեդ. κικερροι (հոգն. թիվ), լատին. cicer, հին հնդկ. օիցնա «ոլոռ» նշանակող բառերը²⁴: Նույն արմատով կազմված անուններ խաղողը, սիսեոն և ոլոռը կրել են իրենց դեռևս վայրի տեսակների պտուղների նմանության՝ դրանց մանր ու գնդիկաձև լինելու պատճառով: Այս տեսանկյունից *սիս «խաղողի

²⁰ Древнегреческо-русский словарь, т. II. М., 1958, с. 1124. Այս տեսանկյունից ուշագրավ է Փոքր Մասիսի Միս անվան հետ սալախ բառի ունեցած լեզվաբանական առնչությունը. սալախ (<սիս-լախ) բարբառային բառը նշանակում է «կայտառ, կտրիճ, աշխույժ» [Մ տ. Մ ա լ ի ս ա յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. IV, Երևան, 1945, էջ 255]: Սրա երկրորդ բաղադրիչը լախ «ծառի ճյուղ, ոստ» բառն է (ՀԲԲ, հ. II, Երևան, 1944, էջ 180): Հանրահայտ է, որ այդիմաստ բառերը կիրառվում են նաև «սերունդ» նշանակությամբ: Հմմտ. հ.-ե. *ozg'ho- «ճյուղ» նախաձևից ծագած հայերեն ոզոր (<*ոզ-որ) «ճյուղ, ճիպոտ», հուն. ὄσχος, պահլ. azg «ճյուղ» (ՀԱԲ, հ. I, էջ 86-87) բառերը:

²¹ Խ ո թ ե ն ա ց ի Ա, Ժբ:

²² ՀԲԲ, հ. IV, էջ 216:

²³ Մ. Պ ե տ թ ո ս յ ա ն. Միսակ և Նոյ նահապետների մասին հայկական ավանդությունների պատմական հենքը. - ՇՀՀԿ գիտ. աշխ., VI, Գյումրի, 2003, էջ 5:

²⁴ ՀԱԲ, հ. IV, Երևան, 1979, էջ 218, Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախադրյալի ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԼԺ), Երևան, 1987, էջ 132:

հաստ»>«խաղող» իմաստաբանական անցումները հիշեցնում են հ.-ե. *oiuā- >*այգ>այգի անցումները: Հ.-ե. այս արմատը նշանակել է «լեռնային մանր պտուղ՝ մոշի, ելակի պես. քոլապտուղ», իսկ *այգ «խաղող» (որից -ի վերջածանցով՝ այգի «խաղողի վագ, խաղողի այգի», «այգի»)՝²⁵:

Մասիսներին և Հայկական Պարին թուրքերի տված Աղրը անունը ևս հայկական ծագում և «խաղողային» ստուգաբանություն ունի: Աղրը լեռնանունը թուրքական լեզուների նույնահունչ բառը չէ, որովհետև վերջինս նշանակում է «ցավ, տկարություն, նեղություն»: Պատմական Հայաստանի տարածքում հաճախ ենք գործ ունենում հին՝ հայկական, տեղանունների աղավաղում - «վերախմաստավորման» երևույթի հետ (հմմտ. Աղթամար>Ակդամար, Ադուտե>Ադսթաֆա, Ոսկեպար>Ասքիփարա, Խառակոնիս>Կարագյունդուզ, Օծուն>Ուզունլար և այլն): Թրք. լեզուների Աղրը-ն հայկական *Աղրի անվան նույնպիսի աղավաղում - «վերախմաստավորման» հետևանք է, իսկ հայկական *Աղրի-ն հայերենի օրինաչափությամբ ծագում է նախնական *Աղուրի-ից: Աղուրի նշանակում է «որթի տաշտաթաղ անելու ճյուղը»²⁶ և արմատակիցն է աղօշ/աղոշ «խաղողի որթի նորածիլ ուղեշ»²⁷ բառի: Մրանց արմատը ծագում է հ.-ե. *al- «աճել, աճեցնել, սնել» նախաձևից²⁸: Աղուրի բառում արմատին հավելվել են -ուր (հմմտ. բլուր, հանուր, մրուր, փշուր և այլն) և -ի վերջածանցները²⁹: Վերջինս նաև բուսանվանակերտ վերջածանց է (հմմտ. այգի, ծիրանի, կաղնի և այլն)³⁰:

Աղուրի-ն ոչ միայն հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանած բառերից է, այլև՝ վաղ վկայվածներից մեկը: Իր տեղանվանական կիրառմամբ այն հայտնի է սեպագիր տեքստերից: Մ. թ. ա 713 թ. Ուրարտու ներխուժած Ստրեատանի Սարգոն 2-րդ թագավորը Վանա լճի ավազանում հիշատակում է Alluria անունով գետ, իսկ ավելի հարավ՝ Սուծածիր (այժմյան Իրաքի հյուսիս-արևելքում) չհասած, Alluria անունով լեռ³¹: Ըստ երևույթին, Alluria գետը Վանա լճին հարող խաղողաշատ և գինեվետ (մինչև Մեծ եղեռնը) գավառներից որևէ մեկում է գտնվել, իսկ Alluria լեռը կարող էր լինել կամ այժմյան Ջուդին (Ջուդի դաղ, ջարալ Ջուդի), կամ նրա մոտերքում գտնվող մեկ ուրիշ լեռ: Ջուդի լեռը հնում Arardi/Արարաղ է կոչվել և նրան ևս վերագրվել է Նոյի և Ջրհեղեղի ավանդազրույցը³²: Աղուրի բառի նախաձևը եղել է *aluria, որովհետև նրա -ի վերջածանցը ծագելով հ.-ե. *(i)ā նախաձևից³³, ուրարտական

²⁵ ՀԱԲ, հ. I, էջ 166:

²⁶ ՀԱԲ, հ. I, էջ 135:

²⁷ ՀԲԲ, հ. I, էջ 47, 52:

²⁸ ՀԼՊՆԺ, էջ 53:

²⁹ Մ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Միսակ և Նոյ նահապետների մասին հայկական ավանդությունների պատմական հենքը, էջ 8:

³⁰ ՀԱԲ, հ. I, էջ 166:

³¹ Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1958, с. 22-23.

³² Մ. Ե ր ե մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39, 53, Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 50, 154:

³³ Հայերեն -ի վերջածանցի հնդեվրոպական ծագման վերաբերյալ տե՛ս ՀԼՊՆԺ, էջ 231:

դարաշրջանի սեպագիր տեքստերում կարող էր գրանցում ստանալ միայն -ia տեսքով (հավանաբար, ըստ արտասանության): Հմմտ. այս վերջածանցը պարունակող տեղանունների գուգահեռ ձևերից Arqania/Արկնի, Alia/Աղի/Հաղի, Giarnia/Գառնի, Teria/Տրի և այլն³⁴: Այս փաստերը խոսում են Աղրի (<*Աղուրի) լեռնանվան բնիկ հայկական լինելու, նրա հնդեվրոպական-հայկական ծագում ունենալու մասին:

Հայկական հետին ավանդազրույցները ուշագրավ տեղեկություններ են պարունակում վայրի խաղողն առաջինը ճաշակած, այն մշակած, դրանից գինի քամած և ըմպած մարդկանց մասին: Մի դեպքում դա Ադամն է (խաղողը ճաշակած դեռևս դրախտում)³⁵, մյուսում՝ Նոյը կամ Աբրահամը³⁶: Անշուշտ, խաղողագործության հնագույն օջախ Հայաստանում նման ավանդազրույցներ պատմվել են նաև քրիստոնեության տարածումից շատ առաջ, իսկ դրանցում կենտրոնական դեր ստանձնած առասպելաբանական կերպարները, բնականաբար, Ադամը, Նոյը կամ Աբրահամը լինել չէին կարող³⁷: Սրանք փոխարինել են տեղական այն կերպարներին (և յուրացրել նրանց գործառույթները), որոնք սերտ կապի մեջ են ըմբռնվել Մասիսների և դրանցից անբաժան ընկալված վայրի խաղողի մշակման հետ: Ըստ այսմ, աստվածաշնչային այդ կերպարների տեղական նախատիպերը լինելու էին Ամասիան և Միսակը: Վերջինիս անվան և խաղողի տեսակ նշող սիսակ բառի նույնությունը Միսակի «խաղողային» բնույթի բացահայտ վկան է: Ամասիայի նույնպիսի բնույթի վերաբերյալ մենք ուղղակի տվյալներ չունենք, սակայն խաղողի առաջին տունը կրած Մեծ Մասիս լեռան անվանադիրը համարվելու հանգամանքը, թերևս, խոսում է Ամասիայի «խաղողային» բնույթի մասին:

Արամայիսի ավագ որդի Շարան թե՛ իր անվամբ (հմմտ. աշարայ/աշորա/բրբ. շարա կոչված հացահատիկի տեսակը և Շարա)³⁸, թե՛ որպես հացառատ Շիրակի անվանադիր³⁹, սերտ առնչության մեջ է դրա առաջատար ճյու-

³⁴ С. Петросян. Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений. – ЗУУՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 3, էջ 81, 84-85, Հ. Կ ա թ ա զ յ զ յ ա ն. Սեպագիր տեղանուններ. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, գիրք I, Երևան, 1998, էջ 87, 132, 206:

³⁵ Կ. Կ ո ս տ ա ն է ա ն ց. Նոր ժողովածու. Միջնադարեան հայոց տաղեր եւ ոտանաւորներ, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 39:

³⁶ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 116-117, 157, 169, 336:

³⁷ Մ. Պ ե տ ը ո ս յ ա ն. Միսակ և Նոյ նահապետների մասին հայկական ավանդությունների պատմական հենքը, էջ 5-16, ն ու յ ն ի՝ «Արարատյան դրախտը» սեպագիր աղբյուրներում. – ՊԲՀ, 2009, № 2-3, էջ 254-255: Նոյը քաջ ծանոթ էր արաբ մատենագիրներին, բայց նրանք Նոյին Մասիսների հետ առնչության մեջ չէին դնում: Հայկական հին ավանդազրույցներին հետևելով, նրանք Մեծ Մասիսը կոչում էին ջաբալ ալ-Հարիթ, որը բառացիորեն նշանակում է «մշակի/հողագործի լեռ» (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 51, էջ 154 ծան. 138, էջ 155): Ըստ էության, դա հայկական Արարատ/Այրարատ անունների արաբերեն թարգմանությունն է (Մ. Պ ե տ ը ո ս յ ա ն. Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Երևան, 2006, էջ 275-277):

³⁸ ՀԱԲ, հ. I, էջ 216:

³⁹ Խ ո ը ն ա զ ի, Ա, Ժբ:

դի՝ հացազգի բույսերի մշակության հետ⁴⁰: Արամայիսի կրտսեր որդի Ամասիան՝ որպես «խաղողային» Մասիս լեռան անվանադիր, բնականաբար, նույնպիսի առնչություն էր դրսևորելու խաղողագործություն-գինեգործության հետ: Հանրահայտ է, որ հազարամյակներ շարունակ հողագործ հայի տնտեսական գործունեության մեջ առաջատար են եղել հացազգի բույսերի մշակումը և խաղողագործություն-գինեգործությունը: Դրանով պայմանավորված՝ մեր նախնիների պաշտամունքում մշտապես առաջնային տեղ են ունեցել հացն ու գինին: Ոչ հեռավոր անցյալում ևս երդվելիս կամ ոգեկոչման պահին հայր բացականչում էր. «Հա՛ցն ու գինի՛ն, Տե՛ր Կենդանին»:

О ДРЕВНИХ НАЗВАНИЯХ И ЭПОНИМАХ АРАРАТСКИХ ГОР

SARGIS PETROSSYAN

Р е з ю м е

В «Географии» Страбона армянские горы *Аб* (Ἄβος) и *Нибар* (Νίβαρος) упоминаются рядом (Strabo, XI, 14, 2; XI, 14, 14). Они вершины Араратских гор – Большой Арарат и Малый Арарат. Эти оронимы индоевропейского происхождения: Ἄβος < и.-е. *ацо- “дед”, Νίβαρος < и.-е. *нецэрос- «новый» (греч. β/ψ). Большой Арарат с «белоснежной вершиной» в «Истории Армении» Мовсеса Хоренаци характеризуется и таким образом: «поистине подобна старцу посреди младших гор» (Хоренаци, I, 12). По древнеармянским преданиям, эпоним Большого Арарата – *Амасия* (Ամասիա), т. к. с древнейших времен эта гора была известна под названием *Масис* (Մասիս), а эпоним Малого Арарата – *Сисак* (Սիսակ), т. к. эта гора известна и под названием *Сис* (Սիս). По генеологии Хайкидов, Амасия Сисаку приходится дедом (Хоренаци, I, 12). Причем, *сисак* (սիսակ) означает и сорт винограда. Эти имена также индоевропейского происхождения. Араратские горы были известны также под названием *Агри* (Աղրի > турец. Ağrı dağ). И этот ороним связан с виноградом. Появление подобных «виноградных» оронимов было обусловлено тем обстоятельством, что Араратские горы издревле считались родиной винограда и виноградарства (вспомним библейского Ноя).

ABOUT THE ANCIENT NAMES AND EPONYMS OF THE ARARAT MOUNTAINS

SARGIS PETROSSYAN

S u m m a r y

In Strabo's "Geography" the names of Armenian Mounts Abos (Ἄβος) and Nibaros (Νίβαρος) are mentioned side by side (Str., XI, 14, 2; XI, 14, 14). They are the names of Great Ararat and Minor Ararat –

⁴⁰ Մ. Պ Է տ ր ո ս յ ա ն. Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 280-288, 298-299, 306-315:

the names of the Ararat Mountains peaks. These oronyms are of Indo-European origin: ἄβος < IE *auo- “grandfather” and Νίβαρος < IE *neworos- “new”. In Movses Khorenatsi’s “History of Armenia” Great Ararat is described as “a mount with a snow-white top” and therefore, “it’s truly like an elder among the younger mounts” (Khorenatsi, I, 12). According to ancient Armenian legends Amasia (*Ամասիա*) is the eponym of Great Ararat, as since ancient times this mount has been known as Masis (*Մասիս*), and the eponym of Minor Ararat is Sisak (*Սիսակ*), as this mount is also known as Sis (*Սիս*). According to Haykid’s genealogy, Amasia is Sisak’s grandfather (Khorenatsi, I, 12). Moreover, sisak (*սիսակ*) is also the name of a sort of grapes. Similar to it, such name of the Ararat Mountains as Aghri (*Աղրի* > Turkish Ağrı dağ) is of Indo-European-Armenian origin. The appearance of similar “grape” oronyms was conditioned by the fact that since older days the Ararat Mountains had been considered to be the homeland of vine and viticulture (recall Noah from the Bible).